

է « Հայր եւ Որդի եւ Հոգիտ Սբ. (Հ. Ալիշան 1863 տարւոյ Բազմավէպի գեկտ. պրակին մէջ , յորում կը նկարագրէ այս սուրբ , Սբք (Այ.)=Աստուծոյ կարգացած է) . եռանկիւնաձեւին վրայ գէպ ի վեր կը ծածանին նոյնպէս ոսկեքանդակ արքունական նշաններ , այսինքն զօշոներ որոնց վրայ նկարուած են գառն Աստուծոյ , Արծուի , Առիւծ եւ եօթնազլխեան վիշապ եւ ասոնց մէջ երկու տապարներ , իսկ այս երկու տապարներուն մէջտեղ թագաւորական դայիսո՞նն թէ դասաառակն Քրիստոսի , անորոշ է : Չմտնամ ըսելու որ եռանկեան կեդրոնը կայ աչք մը : Եռանկիւնին անմիջապէս վարը՝ բոլորակի մը մէջ՝ քանգակուած է Աստուածածին թագապսակ բազմած աթոռի վրայ եւ Յիսուս մանուկն ի գրկին . իսկ բոլորակին եզերքը զըրուած է՝ « + Ի քեզ Տեր յուսացա մի ամաչեցից յախտեան » . ասկէ ալ քիչ մը վարը՝ արարական զարդերու մէջ գրուած է՝ « Տուր զօրութիւն ծառայի քո կեցո զօրդի ազախնո քո եւ արա առ իս նշան բարութեան » . ասկէ յետոյ կուգայ գարձեալ ուրիշ բոլորակ մը՝ որուն կեդրոնը բազմած է թագաւորն Լեւոն թագ ի գլուխ , խաչ եւ գաւազան ի ձեռին , իսկ բոլորակին եզերքը քանգակուած է այսպէս . « + Ողորմութքն Այ Լեոն թագաւոր Հայոց » . իսկ դեռ քիչ մը վարն ալ՝ Սաղմոսի հետեւեալ տունը . « Տեսցեն ատելիք իմ եւ ամաչեցեն զի դու Տեր օգնեցեր ինձ եւ մխիթարեցեր զիս » : Սուրին կոնակն ալ նոյնպէս ոսկի տասերով գրուած է . « + Ողորմութք քով սատակեա զթշնամիս իմ՝ եւ կորո դամենայն նեղիչս անձին իմոյ զի ես ծառայ քո եմ + » : Իսկ սրոյն միւս երեսը՝ զոր աւելորդ համարեցանք լուսանկարել տալ , գրուած է անմիջապէս կոթին տակը այսպէս . « Շինեալ ի քաղաքն ի Սիս ի թիւն Քի 1366 » : — Այսչափ ինչ սրոյն արտաքին նկարագրին : Հ. Ալիշանի Բազմավէպի յիշեալ համարին մէջ գրած համոռտ ստորագրութեան մէջ , մի քանի վրիպակ ընթերցուածներ մուտ գտած են , որովհետեւ նոյն ստեղծող սուրբ անձամբ տեսած չէր , այլ ուրիշին տուած անգեկութեամբ ծանօթ էր . իսկ յետոյ երբ նուէր ընդու նեցանք զայն ի Պետան Պէյէ , քննելով եւ զննելով իմացուեցաւ որ թէպէտեւ անհարագատ է , սակայն եւ ոչ ալ այնքան նորակերտ է , որով կ'ընծայուի երկար հնութիւն :

« Սուրբ գտնուած է 1850 թուականէն քանի մը տարի առաջ՝ Կիւլիկիոյ մէջ , տեղաբնակ Աֆշարներու գլխաւորի մը քով , որն որ հայոյ մը սերունդ ըլլալով , ինչպէս կ'ըսէ Հ. Ալիշան , իրրեւ հայրենական ժառանգութիւն պահած էր , մինչեւ որ 1850ի միջոցները վերոյիշեալ Պետան Պէյը ստացաւ զայն՝ եւ նուիրեց մեր վանքի թանգարանին 1868—9 թուականին : Արոյն վրայի թէ արարական զարդերն եւ թէ բոլոր արձանագրութիւններն ընտիր ոսկով քանգակուած են : Իսկ կոթին բռնատեղի խաչաձեւին վրայ